ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՈՎ

## ՀԱՎԱՍՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՐԾԻՔ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

- Հետայսու ասվելիքն ընդունել որպես մտահոգություններ՝ քննարկման կարոտ հիմնախնդիրների վերաբերյալ,
- Այստեղ հավաքվածները հանդիսանում են նույն շղթայի /համակարգի/ տարբեր օղակներ եւ ցանկացած օղակում խզումը կամ թուլությունը կարող են խզել կամ թուլացնել շղթայի ամբողջականությունը…

# ԶԵԿՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
## /ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ /

- Օրենսդրական դաշտ,
- Կառուցվածքային խնդիրներ,
- Կարծրատիպեր,
- Կրթական ծրագրեր,
- Ռեսուրսներ,

# ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ

9) պետական հավատարմագրման վկայականը տրվում է … այդ հաստատության <u>մասնագիտությունների առնվազն 75 տոկոսի պետական հավատարմագրման առկայության դեպքում.</u>

***<<ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀՀ օրենք ,Հոդված 13***

4. Ծրագրային հավատարմագրումն իրականացվում է կամավորության սկզբունքով <u>միայն ենթակառուցվածքային հավատարմագրման դրական արդյունքի դեպքում…</u>

***<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳ>>***

***ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն*** *որոշում*

# ԳՈՐԾՈՂ ՄՈԴԵԼ



# ԳՈՐԾՈՂ ՄՈԴԵԼ

**ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ**

**ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ**

1.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ
4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ
5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ
6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ
8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
9. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ
10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

**ԾՐԱԳՐԱՅԻՆ**

1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ
2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ
3. ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ
4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
6. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ
7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

# ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄՈԴԵԼ



# ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄՈԴԵԼ



# ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ

Առանձին օրինակ եւ նկատառումներ՝ կապված նորմատիվ իրավական ակտերում ներառված առանձին ձեւակերպումների հետ.

- ‘’ էական փոփոխությունների եւ զարգացումների հանգեցնող գործընթացների մշակման ու պլանավորման համար պատասխանատվության ստանձնում.’’

*/Որակավորումների ազգային շրջանակում սահմանված՝ մագիստրոսի կարողություններից մեկը/.*

**Այս ձեւակերպման մեջ առկա է իրավական բնույթի 5 թնջուկ՝**

1.Հստակեցված չէ փոփոխությունների եւ զարգացումների առարկան,

2.Ինչ չափանիշով է գնահատվելու “էական” եզրույթը,

3.”Եւ”-ը նշանակում է, որ պարտադիր են թե փոփոխությունները, թե զարգացումները,

4. 4.Պատասխանատվությունն առնչվում է սոսկ մշակմանն ու պլանավորմանը, թե նաեւ դրանց հետեւանքով առաջացող փոփոխություններին ու զարգացումներին…

5.Վերջապես, նման պայման կարող է սահմանվել Նոբելյան կամ առնվազն ՀՀ պետական մրցանակի ներկայացվող աշխատանքների համար.

# ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ

Հայաստանի Հանրապետությունում հաստատված են բանվորական եւ այլ մասնագիտությունների դասակարգիչներ, սակայն գիտության բնագավառի եւ ոլորտների դասակարգիչները դեռեւս չունենք:

*“Ճարտարապետություն” մասնագիտության առանձնահատուկ դեգերումները…*

Ինչպես եվրոպական, այնպես էլ ռուսական դասակարգիչներում Ճարտարապետությունը որպես գիտություն հայտնվում է տրամագծորեն տարբեր ցանկերում */տեխնիկա, տեխնոլոգիա, արվեստ, հումանիտար եւ այլն…/*

# ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Որակավորումների ազգային շրջանակով սահմանված պահանջներ

ՀՀ կառավարության 2011թ. մարտի 31-ի թիվ 332-Ն որոշում

ՅՈՒՆԵՍԿՈՅԻ եւ Ճարտարապետների միջազգային միության հռչակագիրը ճարտարապետական կրթության մասին

Ընդունվել է 1996թ., լրամշակվել՝ 2005թ

Ճարտարապետական կրթությունը ներառում է

ՆԱԽԱԳԾՈՒՄ
/կարողություններ/

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՆԱԽԱԳԾՈՒՄ /կարողություններ/

Օգտվել երեւակայությունից, մտածել ստեղծագործաբար, առաջադրել նորամուծություններ եւ ապահովել նախագծի ղեկավարումը

Ժողովել տեղեկույթ, կանխատեսել հնարավոր հիմնախնդիրները, վերլուծել դրանք եւ առաջ քաշել քննադատական դատողություններ, ինչպես նաեւ մշակել եւ ձեւակերպել գործողությունների ռազմավարություն

Դրսեւորել եռաչափ տարածական մտածողություն նախագծի մշակման ընթացքում

Համաձայնեցնել հակասական գործոնները, ինտեգրել գիտելիքները եւ կիրառել հմտություններ նախագծային լուծումների ընտրության ժամանակ

# ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

- Մշակույթի եւ արվեստի ուսումնասիրում
- Սոցիալական գիտությունների ուսումնասիրում
- Շրջակա միջավայրի ուսումնասիրում
- Տեխնիկական գիտությունների ուսումնասիրում
- Նախագծման մեթոդոլոգիայի ուսումնասիրում
- Մասնագիտական գիտելիքների ձեռքբերում /արհեստավարժություն/

# ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարողանալ գործել եւ փոխանցել գաղափարներ համագործակցության գործընթացում՝ նախագծերի գրավոր նկարագրության եւ քննարկումների միջոցով, նկարել եւ պատրաստել մանրակերտեր, իրականացնել քանակական վերլուծություն եւ արժեքային գնահատում

Հետազոտության, նախագծի վերջնական տեսքի որոշման եւ նախագծային լուծումների ներկայացման գործընթացում կիրառել ձեռքի աշխատանք, էլեկտրոնային եւ գրաֆիկական մեթոդներ, ինչպես նաեւ մանրակերտերի պատրաստման սարքեր

Ճարտարապետական միջավայրի տարբեր բնութագրիչները հաշվարկելիս

ձեռքի եւ /կամ/ էլեկտրոնային միջոցների կիրառմամբ արժեքային գնահատման մեթոդների ըմբռնում

Անկախ ընդհանուր կրթական ծրագրում /ուսումնական պլանում/ ներառված առարկաների քանակից, դրանցից յուրաքանչյուրը բովանդակային առումով պետք է ծառայեցվի որակավորումների ազգային /նաեվ միջազգային/ շրջանակներով սահմանված ելքային կոնկրետ արդյունքի ապահովմանը…

# ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՁԵՎ

| ԿՐԹԱՄԱՍԵՐ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ | | | ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ԳԻՏԵԼԻՔՆԵՐ | | ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | |
| 1 | 1.1. | | Գ1 | | Հ1 | | Կ1 | |
| | 1.2. | | Գ2 | | Հ2 | | Կ2 | |
| | 1.3. | | Գ3 | | Հ3 | | Կ3 | |
| 2 | 2.1. | | Գ4 | | Հ4 | | Կ4 | |
| | 2.2. | | Գ5 | | Հ5 | | Կ5 | |
| | 2.3. | | Գ6 | | Հ6 | | Կ6 | |
| 3 | 3.1. | | Գ7 | | Հ7 | | Կ7 | |
| | 3.2. | | Գ8 | | Հ8 | | Կ8 | |
| | 3.3. | | Գ9 | | Հ9 | | Կ9 | |
| 4 | 4.1. | | Գ10 | | Հ10 | | Կ10 | |
| | 4.2. | | Գ11 | | Հ11 | | Կ11 | |
| | 4.3. | | Գ12 | | Հ12 | | Կ12 | |
| | 4.4. | | Գ13 | | Հ13 | | Կ13 | |

- ԿՐԹԱՄԱՍԵՐՈՒՄ ՉՆԵՐԿՎԱԾ ՏՈՂԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է, ՈՐ ԱՅԴ ԱՌԱՐԿԱՆ ԱՎԵԼՈՐԴ Է.
- ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՒՄ ՉՆԵՐԿՎԱԾ ՏՈՂԵՐԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԵՆ, ՈՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՌԱՐԿԱՆԵՐ .

# ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



# ԿԱՐԾԻՔԱՏԻՊԵՐ

1. Խորհրդային կրթական համակարգը լավագույններից էր աշխարհում եւ չարժեր այն ..քանդել..

   *---այս պարագայում մոռացություն է մատնվում կամ միտումնավոր չի հիշվում ,,երկաթե վարագույրի,, գործոնը.*

2. Ինչի համար ենք այսքան մասնագետներ պատրաստում /երբեմն ոչ բավարար որակի/, եթե շրջանավարտների զբաղվածության խնդիրը չենք լուծելու…

   *---իսկ ում խնդիրներն են աշխատաշուկայի ուսումնասիրությունն ու զբաղվածության ապահովումը…*

# ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԸ

- Մասնավոր հատված,
- Համայնքներ */տեղական ինքնակառավարման մարմիններ ու դրանց ենթակայության ծառայություններ/,*
- Պետություն */պետական կառավարման հանրապետական եւ տարածքային մարմիններ, ՊՈԱԿ-ներ, պետական իշխանության այլ օղակներ/.*

# ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

## Կարեւոր հարցեր.

- ինչպես գնահատել առկա ռեսուրսների բավարարությունը.- *արդյոք պետք է հիմք ընդունել ՀՀ կառավարության 2007թ. դեկտեմբերի 13-ի թիվ 1490-Ն որոշման 6-րդ հավելվածը՝ "բարձրագույն ուսումնական հաստատություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմերը".*
- ով պետք է սահմանի անհրաժեշտ այլ ռեսուրսների նվազագույն /գուցե նաեւ առավելագույն/ չեմերը,
- ինչ միջոցներով են կատարվելու անհրաժեշտ ուսումնասիրությունները ու որքան ժամանակ է տրամադրվելու այդ խնդրի լուծման համար.

# ՌԵՍՈՒՐՍԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱԿ

## ՄՈՍԿՎԱՅԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ **(МАРХИ)**

Ճարտարապետության բակալավրի կրթական ծրագիրը 1650 էջանոց փաստաթուղթ է, որի մշակմանը մասնակցել է 66 մասնագետ

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Քննարկման առարկա դարձնել հավատարմագրման գործընթացը ոչ թե փուլային, այլ փաթեթային տարբերակով անցկացնելու սկզբունքը */լիազոր մարմին/,*
- Զգուշություն ցուցաբերել իրավական ակտերի եւ ինքնավերլուծության փաստաթղթերի ինչպես առանձին ձեւակերպումների, այնպես էլ լեզվի նկատմամբ ընդհանրապես */լիազոր մարմին եւ ՄՈՒՀ-եր/,*
- Ամբողջականացնել որակի ներքին ապահովման բուրգը */ՄՈՒՀ-եր/,*
- Սահմանել որակի ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսների նորմերը */լիազոր մարմին եւ ՄՈՒՀ-եր/.*

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԵՎ ԲՈԼՈՐԻՍ ԲԱՐԻ ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ԲՈԼՈՆԻԱ...